Հայտարարվում է մրցույթ՝ «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սեմյոնովկայի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ռուսաց լեզվի (24 դասաժամ ), աշխարհագրության (8դասաժամ).ՆԶՊ (2դասաժամ) և ֆիզկուլտուրայի (7 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթը անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:Թեստավորման փուլն անցկացվում է՝ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի:Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

-դիմում (Ձև 1), մեկ լուսանկար ,3×4 չափի

-բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ(դիպլոմ),

-անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը(առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձև 5),

- այլ պետությունների քաղաքացիները ՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչում հաստատող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճեների հետ և բնօրինակները վերադարձնում : Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկը ամբողջական չէ կամ առկա են թերություններ,մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերը ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից՝ 2024 թվականի սեպտեմբերի 2 -ից մինչև սեպտեմբերի 13 -ը

**ներառյալ,ամեն օր՝ ժամը $9^{00}$-ից $15^{00}$-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:**

**Մրցույթը տեղի կունենա 2024թվականի սեպտեմբերի 18-ին՝ ժամը $13^{00}$ – *ին*, ՀՀ Գեղարքունիքի մարզի Սեմյոնովկա գյուղի հիմնական դպրոցում, հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, գ.Սեմյոնովկա, 1-ին փողոց շենք 78:**

**Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 26-25-31 հեռախոսահամարով:**